ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼՅԱՆ
ԵՊՀ Ռադիոհեռուստաժուռնալիստիկայի
ամբիոնի հայցորդ

ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԵԹԵՐՈՒՄ

Ռադիոհեռուստատեսային լրագրության սկզբունքային առանձնահատկություններից մեկը լեզվի խնդիրն է: Հայտնի է, որ ռադիոն և հեռուստատեսությունն, իբրև բանավոր խոսքի կրողներ, ունեն տեքստերի կազմության իրենց հիմնարար սկզբունքները, որոնցից գլխավորն ու առաջնայինը մատուցվող նյութի պարզությունն ու հստակությունն է, այսինքն՝ լսողին կամ դիտողին խոսքի միանգամից ընկալելի լինելը: Ժուռնալիստիկայի այս ոլորտները պահանջում են՝

ա) նախադասությունների կազմության պարզ տեսակներ

բ) տվյալ լեզվում բառերի առավել գործածելի և հայտնի տարբերակներ

գ) խոսքի մասերի պարզ ձևերի օգտագործում և այլն:

Ռադիոհեռուստատեսային նյութերի խոսքի կազմության սկզբունքների մասին բազմիցս տարբեր տեսաբաններ են գրել: Վերջիններիս ելակետային սկզբունքը հեռուստառադիոեթերի լեզվի խնդրում նույնն է. «Ռադիոհեռուստասեսային լրատվության հիմնական և գլխավոր նպատակը հսկայական լսարանին լուրերի պարզ և հստակ մատուցումն է առանց լեզվական արգելքների»[1]:

Հայաստանյան հեռուստառադիոեթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խոսքի կազմության վերը նշված դրույթներից զգալիորեն տարբերվում են հոգևոր-կրոնական թեմաներով պատրաստվող նյութերը: Համեմատությունների ժամանակ աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններ ու շեղումներ, որոնք ունեն իրենց տարաբնույթ պատճառները: Հոգևոր-կրոնական ուղղվածության ռադիոհեռուստատեսային հաղորդումների լեզվաոճական առանձնահատկության հիմնական պատճառը այդ նյութերի համար աղբյուր հանդիսացող գրականությունն է, որը գրաբար է: Լեզուն մտածողություն է, իսկ մեր կրոնը ձևավորվել է գրաբարյան մտածողությամբ, այդ պատճառով, որքան էլ փորձ է արվում տեքստը շարադրել ժամանակակից հայերենով, միևնույն է, տեքստում պահպանվում է գրաբարյան մտածողությունը: Ավելին, ամերիկացի լեզվաբան Բենջիամին Լի Ուորֆը լեզուն դիտարկում է որպես մարդկանց հոգեկան, մտավոր ու պրակտիկ գործունեության փոխհարաբերության արդյունք: Նա այդ փոխհարաբերությունը հասկանում է մարդկանց մտածողության, աշխարհայեցողության և վարվեցողության կախվածությունը բառագործածության ընդունված ձևերից:

«Մեր մտածողական աշխարհը պատճառակցված է լեզվով և այդ լեզվականորեն պատճառակցված աշխարհը ոչ միայն հարաբերակցվում է մեր մշակութային իդեալների ու դրվածքների հետ, այլև մեր բուն ենթագիտակցական գործողությունները ներառում է իր ազդեցության ոլորտի մեջ ու դրանց տալիս որոշ տիպական

[1] **Քուիլեր Դ. Ք.**, Ռադիոհեռուստատեսային լրագրության բառապաշարը, «Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա», Եր., 2001 թ., էջ 8:

գծեր»[2]:

Այդ պատճառով մեր օրերում իրար ետևից թարգմանվող հոգևոր-կրոնական գրականության ու նյութերի մեծ մասի մեջ պահպանվում է գրաբարյան լեզվամտածողությունը: Ուստի հոգևոր-կրոնական թեմաներով ռադիոհեռուստատեսային մի շարք նյութեր ստեղծվում են գրաբարյան բառակազմական ձևերով ու բառապաշարով: Ռադիոյով և հեռուստատեսությամբ հնչած հոգևոր-կրոնական թեմաներով նյութերը թեպետ կազմված են ժամանակակից հայերենի կանոններին համապատասխան, սակայն այդ նախադասություններն իրենց մեջ կրում են բազմաթիվ գրաբարյան բառեր, բառակապակցություններ: Իհարկե, լրագրողի մասնագիտական պարտքն է ռադիոհեռուստատեսային լսարանին պարզ նյութ մատուցել: Սակայն այս դեպքում լրագրողը գործ ունի Եկեղեցու ավանդական մշակույթի հետ: Դարերով ամրագրված արտահայտությունների ու ձևակերպումների խախտումը կարող է հանգեցնել դավանաբանական սխալի: Այդ պատճառով լրագրողը խուսափում է բառակազմական և շարահյուսական ինքնուրույն ձևեր կիրառել և նյութը գրելիս օգտագործում է հենց այն ավանդական արտահայտություններն ու ձևակերպումները, որոնք ընդունվել են մեր Եկեղեցու հայրերի կողմից հազարամյակների ընթացքում:

Այսօր ռադիոհեռուստատեսությամբ հնչող առավել հաճախ հանդիպող եկեղեցական քարացած արտահայտություններից կարող ենք հիշել «հոգևորականաց դաս»[3], «դպրաց դաս»[4], «հայորդյաց տուն»[5], «իջման վայր»[6], «երիտասարդաց միություն»[7], «ամուսնացյալ քահանա»[8] և բազմաթիվ այլ գրաբարյան վերջավորություններով բառակապակցություններ, որոնց ժամանակակից տարբերակները գտնված չեն կամ էլ կիրառության մեջ դեռևս չկան:

Եկեղեցական նյութերում հաճախ կարելի է հանդիպել ոչ միայն քարացած բառակապակցությունների ու արտահայտությունների, այլև ամբողջական նախադասությունների, որոնց շարահյուսությունը քարացած է: Օրինակ՝

«Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության ժամանակ ձևավորվեցին հայորդյաց տները»[9]*:*

Այս և նման նախադասություններն անհնար է շարահյուսական փոփոխության ենթարկել: Եվ նմանատիպ միտք արտահայտելու համար լրագրողը ստիպված նախադասություններում կիրառում է շարահյուսական անհարթություններ:

Հայտնի է, որ հեռուստառադիոեթերի լեզուն բանավոր խոսքն է գրավոր տարբերակով, այսինքն՝ «Գրավոր նախադասության բարդ կառուցվածքին հետևում է բանավոր խոսքի պարզ, հստակ և ռիթմիկ արտահայտումը»[10]:

---

[2] WHORF B. L.,<.ENGUAG, THOUGT, AND REALITI>, p. 134.

[3] «Եկեղեցական կյանք», հաղորդաշար, «Շողակաթ», Երևան, 2005 թ.:

[4] «Սրբադասման կարգ», հաղորդում, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

[5] «Ներուժ», հաղորդում, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

[6] «Էջմիածին», ֆիլմ, «Շողակաթ», Երևան, 2004 թ.:

[7] «Եկեղեցական կյանք», հաղորդաշար, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

[8] «Սրբադասման կարգ», հաղորդում, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

[9] «Եկեղեցական կյանք», հաղորդաշար, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

[10] **Քոլհլեր Դ. Ք.**, «Գրել ունկի համար», «Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա», Եր., 2001 թ. էջ 6:

Պետք է նշել, որ ռադիոյի ու հեռուստատեսության համար այս առանցքային սկզբունքից տարբերվում են հոգևոր-կրոնական թեմաներով պատրաստվող նյութերը:

«Հայոց հոգևոր-կրոնական մշակույթը, շատ քաղաքակիրթ ազգերի մշակույթների նման, բաժանվում է տիպաժամանակագրական երկու մեծ շրջանների. 1. անգիր կամ նախագրային շրջանի հեթանոսական մշակույթի և 2. գրավոր շրջանի կամ քրիստոնեական մշակույթի, որոնք թեպետ իրարից զգալի տարբեր, բայց բնավ իրարից կտրված չեն, և երկրորդ շրջանը կազմում է առաջինի օրգանական զարգացման շարունակությունը»[11]:

Պետք է նշել նաև, որ քրիստոնեական մշակույթը իր հետագա զարգացման ընթացքում անշուշտ ունեցավ նաև բանավոր տարբերակ, սակայն մեզ գրավոր տարբերակն է միայն ժառանգություն հասել: Թեև լեզվաբանական հատուկ ուսումնասիրությունները կարող են պարզել, թե գրաբարն իր գործածության ժամանակաշրջանում բանավոր ինչ գործառույթներ է ունեցել, սակայն հոգևոր-կրոնական թեմաներ լուսաբանողները առաջնորդվում են միայն գրաբարյան գրավոր գրականությամբ: Ինչ է ստացվում, որ հոգևոր-կրոնական թեմաներ լուսաբանող լրագրողները պետք է հաղթահարեն ոչ միայն գրաբարյան հոգևոր-կրոնական բառապաշարը, գտնեն դրանց համարժեքը ժամանակակից հայերենում, այլև կարողանան գրավոր լեզվամտածողությունը դարձնել բանավոր: Շատ դեպքերում գրավորից բանավորին անցնելու անհնարինությունն էլ հոգևոր-կրոնական թեմաներով նյութերին հաղորդում է խրթինություն, վերամբարձություն և լսարանի համար դառնում դժվարըմբռնելի:

Հոգևոր-կրոնական, եկեղեցական թեմաներով նյութերին հատուկ է լեզվաոճական մի առանձնահատկություն ևս: Տեքստերում գործածվող գոյականներն ունեն իրենց անփոփոխ մակդիրներն ու ածականները, այսինքն՝ գոյականներից շատերը դարերի ընթացքում ստացել են մակդիրներ ու ածականներ, որոնք մշակվել և դարձել են ավանդական: Ուսումնասիրելով հոգևոր-կրոնական, եկեղեցական բնույթի հաղորդումների, սյուժեների տեքստերը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ գոյականներն իրենց անփոփոխ կամ քարացած մակդիրներով ու ածականներով: Օրինակ՝ «Սրբալույս Մյուռոն», «սրբազան արարողություն», «Սրբազան Պատարագ», «Սուրբ և Անմահ Պատարագ», «Հոգեշնորհ հայրեր», «Սրբատառ կոնդակ», «երջանկահիշատակ Սրբազան Հայր», «Հրաշափառ Հարություն», «Միածնաէջ Տաճար», «նորընծա սարկավագ», «Սրբազան Աջ», «սրբազան մասունք», «ճշմարիտ հավատք»[12] և այլն:

Կրոնական և աստվածաբանական գրականության, ինչպես նաև հոգևոր-կրոնական ռադիոհեռուստատեսային հաղորդումների տեքստերում «Աստված» և «Հիսուս» բառերը որոշյալ առումով չեն օգտագործվում: Սա ևս շեղում է ժամանակակից հայերենի ուղղագրական կանոնից. այն գրաբարյան ուղղագրական կանոններից մեկն է: Գրաբարում բոլոր հատուկ անունները, որոնք նախադասության մեջ ենթակայական գործածություն ունեին, որոշյալ առումով չեն կիրառվում: Ուղղագրական այս կանոնը ժառանգել էր նաև արևմտահայերենը և կիրառության մեջ էր

[11] **Սարգիս Հարությունյան,** Հայ հոգևոր-կրոնական մշակույթի միասնականության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2002 թ., համար 2, էջ 3:

[12] Այս օրինակները ևս «Շողակաթ» ՀԸ նախորդ էջում նշված հաղորդումներից են:

մինչև քսաներորդ դարի քառասուն-հիսունական թվականները:

Հոգևոր-կրոնական, եկեղեցական թեմաներով նյութերի տեքստաբանական ուսումնասիրությունից հետո կարելի է ասել, որ, ի տարբերություն ռադիոհեռուստատեսային մյուս նյութերի, սրանք ծանրացած են ածականներով, մակդիրներով: Նման բառակապակցությունների ու արտահայտությունների առկայությամբ հոգևոր-կրոնական, եկեղեցական նյութերի տեքստերը պաթետիկ և վերամբարձ են: Սա կարելի է համարել հոգևոր-կրոնական, եկեղեցական նյութերի լեզվառճական առանձնահատկություններից մեկը:

Վերը նշված լեզվառճական առանձնահատկություններից պարզ է դառնում, որ հոգևոր-կրոնական, եկեղեցական նյութերն ունեն լեզվառճական հստակ շարադրանք՝ արդեն հայտնի բառերով ու բառակապակցություններով: Շատ ձևակերպումներ, անընդհատ կրկնվելով տեքստերում և փոխանցվելով մի տեքստից մյուսը, ուղղակի կարծրացել են: Եթե կազմելու լինենք տեքստերի լեզվառճական կմախքը, ապա կտեսնենք, որ դրանք շատ նման են իրար:

Այս կառույցներում ոչ միայն հայտնի են գոյականական մակդիրները, այլև որոշ ստորոգյալներ: Քանի որ Պատարագը «մատուցվում է», օրհնությունը՝ «բաշխվում», հոգևորականները՝ «ձեռնադրվում»[13] և այլն:

Կարող ենք ասել, որ հոգևոր թեմաներ կամ եկեղեցական տոներ լուսաբանող լրագրողը նյութը գրելիս բառերի գործածության, շարադրանքի սահմանափակ հնարավորություններ ունի: Բացի այս, եթե սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ թեմաներով գրելիս կարելի է տարբերել այս կամ այն լրագրողի ձեռագիրը, ապա հոգևոր-կրոնական թեմաներով գրող լրագրողների պարագայում այդ ձեռագիրը դժվար է զատորոշել: Նման եզրահանգման կարելի է հանգել՝ անգամ ամենափոքր համեմատությունն իսկ կատարելով: Օրինակ՝ համեմատենք տարբեր լրագրողների տարբեր ժամանակներում նույն թեմայով գրված նյութերի տեքստերը: Ասենք, համեմատենք Հիսուսի Հարության կամ եկեղեցական որևէ այլ տոնի թեմայով գրված սյուժեների տեքստերը: Կտեսնենք շատ աննշան տարբերություն: Ասվածից չպետք է ենթադրել, որ հոգևոր-կրոնական, եկեղեցական թեմաներով նյութերն ավելի դյուրին է լուսաբանել, քան քաղաքական կամ այլ թեմայով նյութերը: Կա իմացության մի աստիճան, առանց որի իմացության եկեղեցական որևէ նյութի նկարահանման գնալն անգամ անհնար է: Պատկերացրեք՝ եկեղեցական տոն լուսաբանող լրագրողը չիմանա այդ տոնի խորհուրդը, ով է պատարագիչը, չիմանա նրան՝ ըստ հոգևոր աստիճանի դիմելու ձևը և այլն:

Անհնար է առանց վերը նշված գիտելիքների, որն է՝ «եկեղեցական անունների ու անվանումների բառաֆոնդի» իմացության, նկարահանման գնալ կամ, առավել ևս, տեքստ գրել: Սակայն այս բնագավառում երկար տարիների փորձ ունեցող լրագրողները կփաստեն, որ որոշ ժամանակ հետո, երբ յուրացվում են այդ գիտելիքները, եկեղեցական նույն տոներն ու արարողությունները լուսաբանելիս անխուսափելի է դառնում տեքստերի, նախադասությունների, դրանցում գործածվող բառերի, արտահայտությունների կրկնությունը: Սա ոչ թե լրագրողի ինֆորմացիային կամ նյութին վատ տիրապետելուց է, այլ Հայ Առաքելական Եկեղեցու ավանդապահությունից: Իհարկե, սա հարցի միայն մի կողմն է: Որովհետև դժվար է հավատալ, որ 21-րդ դարում ապրող և ստեղծագործող լրագրողին կարող է Հայ Առաքելական Եկեղե-

[13] «Շողակաթ» ՀԸ (այս արտահայտությունները կրկնվում են տարբեր հաղորդումներում):

ցու ավանդապաշտությունն այնքան խանգարել, որ վերջինս տեքստը ազատորեն, ինքնուրույն և յուրովի չկարողանա շարադրել: Դիտարկումները ցույց են տալիս, որ այս գործընթացում խնդիրն ավելի շատ լեզվական է, քան եկեղեցական կամ կրոնական:

Հայտնի է, որ լեզվի զարգացումը պայմանավորված է տվյալ հասարակությամբ: Եվ երրորդ հազարամյակի մարդը լեզվի հարցերում, ինչպես ասում են, իրեն տանտիրոջ կարգավիճակում է զգում և լեզվի հետ վարվում սեփականատիրոջ իրավունքով: Այս երևույթը, որն է՝ լեզուն գործնականացնել, հարմարեցնել սեփական ասին, խոսակցական զանազան երանգավորումների ենթարկել և այլն, հատուկ է ոչ միայն ժամանակակից հայերենով խոսողներին, այլև ժամանակակից մյուս լեզուներին նույնպես: Սակայն ժամանակակից գրական հայերենն աղավաղման տեսակետից այսօր վատթարագույնների շարքում է: Ներկայիս հասարակությունը գրական հայերենի «համարժեքը» գտել է կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Հասարակությանը անմատչելի է մնացել միայն հոգևոր, կրոնական լեզուն: Ինչու՞:

Ըստ Գերմանացի հոգեբան, փիլիսոփա, ֆիզիոլոգ, լեզվաբան Վիլհելմ Վունդտի (1832-1920)՝ լեզուն հարաշարժ պրոցես է: Այն «կոլեկտիվ կամքի»[14] կամ «ժողովրդական ոգու» դրսևորման ձևերից մեկն է: Վունդտը կարծում է, որ «լեզուն հիմնված է հոգեկան բարձր ձևերի վրա. մտածողություն, կամք, ընկալում, հիշողություն և այլն»[15]:

Դիտարկումները ցույց են տալիս, որ բացի հոգևոր, կրոնական ոլորտից, կյանքի գրեթե բոլոր ոլորտներում հասարակությունը լեզվական իր «նպատակին» հասնելու համար դրսևորում է «կոլեկտիվ կամք»: Եթե առաջնորդվենք Վունդյան հոգեբանությամբ, ապա կարելի է հասկանալ, որ լրագրողը, որպես հասարակության մեկ միավոր, չի կարող միայնակ ինքնուրույն քայլ կատարել, եթե չունի հասարակության հավանությունը (խոսքը լեզվական խնդրի մասին է):

Հասարակությունն ինքը հոգևոր-կրոնական ոլորտում չի կարողանում լեզվական արգելքները հաղթահարել ոչ միայն այն պատճառով, որ չի կարողանում «կոլեկտիվ կամք» դրսևորել, այլև այդ կամքով հանդերձ այսօրվա հասարակությունը չի կարող հոգևոր, կրոնական լեզուն փոփոխել, դարձնել ավելի մատչելի, որովհետև համապատասխան հոգևոր գիտելիքներ չունի:

Օբյեկտիվ իդեալիզմի տեսաբաններ Հեգելն ու Հումբոլդտը համարում էին, որ «լեզուն հոգու ինքնազարգացումն է»[16]: Եթե ներկայիս հասարակությունը, որի կեսից ավելին խորհրդային գաղափարախոսության կրողն է, ունի սահմանափակ հոգևոր-կրոնական գիտելիքներ, չի կարող այսօր լեզվի հարցում իր դիրքորոշումը հայտնել:

Ստացվում է հետևյալ պատկերը. խորհրդային հասարակարգի գաղափարախոսությունից ազատվել ցանկացողների համար այսօր հոգևոր-կրոնական ինֆորմացիայի հիմնական աղբյուրը ԶԼՄ-ներն են՝ հատկապես հեռուստատեսությունն ու ռադիոն: Այստեղից հնչող հոգևոր-կրոնական հաղորդումների սյուժեների լեզուն հիմնականում գրաբարյան վերջավորություններով ու արտահայտություններով է, երբեմն նաև գրաբարյան շարահյուսությամբ: Նմանատիպ եղանակով է կազմված ոչ միայն լրագրողի խոսքը, այլև այս թեմաներով սյուժեներում հանդես եկողների, հարցազրույցներին մասնակից հոգևորականների խոսքը: Ի դեպ, հոգևոր դասը ևս

[14] **А. А. Леонтев**, «Что такое психологизм», «Языкознание и психология», М., 1966, ст. 8-9.

[15] Նույն տեղում:

[16] Նույն տեղում, էջ 5:

այսօր հանդիսանում է հոգևոր, կրոնական ինֆորմացիայի աղբյուրներից մեկը ոչ միայն հեռուստառադիոեթերում, այլև ծեսի ու քարոզի ժամանակ: Եթե քննենք նաև հասարակության համար հոգևոր-կրոնական գիտելիքի աղբյուր հանդիսացող ինֆորմացիայի մյուս ձևերը, զանազան տոնացույցներ, քրիստոնեական մամուլ և այլն, որոնք թեև հեռուստառադիոլսարանի համեմատությամբ ավելի փոքր լսարան ունեն, սակայն նույնպես գրաբար են և, ինչպես վերը նշեցինք արդեն, հասարակությանը հոգևոր-կրոնական գիտելիքը ընկալելու համար խոչընդոտներից մեկը:

Հասարակությունը, սակայն, եթե ինքը չի կարողանում հոգևոր-կրոնական լեզվի խնդրում «կոլեկտիվ կամք» դրսևորել արդեն նշված պատճառներով, արդյո՞ք լրագրողը, որպես հասարակության ինֆորմացիայի հիմնական սպասարկող, կարող է կամ «իրավունք» ունի հոգևոր-կրոնական լեզուն գոնե իր տեքստերում դարձնել դյուրըմբռնելի: Ասենք, այս թեմաներով պատրաստվող հեռուստառադիոհաղորդումների տեքստերը լրագրողը կազմի ժամանակակից հայերենի կանոնների համաձայն, գրաբարյան բառերի ու բառակապակցությունների փոխարեն օգտագործի ժամանակակից հայերենում առավել գործածելի տարբերակներ: Օրինակ՝ «Աստված» բառը նախադասության մեջ օգտագործի որոշյալ առումով, ոչ թե անորոշ, որն ընդունված է աստվածաբանական գրականության մեջ: Լեզվաբանական այս հարցերը, որոնք նաև աստվածաբանական ու եկեղեցական են, պետք է քննության առնվեն որպես կարևոր ու հրատապ խնդիր: Լեզվական այս խնդիրների լուծումից է կախված նաև հոգևոր-կրոնական ռադիոհեռուստատեսային հաղորդումների նկատմամբ լսարանի հետաքրքրությունն ու աճը: Ավելացնենք նաև, որ վերը նշված լեզվական այս խնդիրները հարթեցնելուց հետո միայն հոգևոր-կրոնական հեռուստառադիոհաղորդումները կհամապատասխանեն լրագրության ընդհանուր հիմունքներին ու կդառնան օրինաչափ:

Հոգևոր-կրոնական հեռուստառադիոհաղորդումների համար խիստ կարևոր լեզվական այս խնդիրները մինչև կգտնեն իրենց լուծումը, մեր կարծիքով, լրագրողը պետք է ինքնուրույն քայլեր անի՝ հնարավորինս տեքստն ազատելով գրաբարյան կաղապարված մտքերից ու արտահայտություններից՝ թեկուզ միայն լսարանին ծառայելու լրագրողական իր պարտավորությունից ելնելով: